

«Գրանցված է»
 ՀՀ արդարադատության
 նախարարության կողմից
 1 նոյեմբերի 2011 թ.
 Պետական գրանցման թիվ 12411464

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՀՐԱՄԱՆԸ
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
 ԿՈՄԻՏԵԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի N 119-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ
 ՄԱՍԻՆ**

14 հոկտեմբերի 2011 թ.
 ք. Երևան N 2878-Ն

Հիմք ընդունելով «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15.1-րդ կետը և 2-րդ հավելվածի 3-րդ կետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1005-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 18-րդ կետով՝

Հրամայում եմ՝

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2010 թվականի փետրվարի 8-ի «Հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով համակարգի ներդրման ժամանակացույցը հաստատելու մասին» N 119-Ն հրամանով հաստատված հավելվածը լրացնել նոր 20.1 և 20.2 կետերով հետևյալ բովանդակությամբ՝

«20.1.	ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ՝ ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու ժամանակաշրջանում դուրս գրած և սահմանված կարգով անվավեր ճանաչված էլեկտրոնային հարկային հաշիվների վերաբերյալ	ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2011թ. հոկտեմբերի 11-ի N 2875-Ն հրաման		2012 թվականի հունվարի 1-ից	
20.2.	ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ՝ վերակազմակերպված իրավաբանական անձի կողմից դուրս գրված և սահմանված կարգով անվավեր ճանաչված էլեկտրոնային հարկային հաշիվների վերաբերյալ	ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2011թ. հոկտեմբերի 11-ի N 2875-Ն հրաման		2012 թվականի հունվարի 1-ից	

Կոմիտեի նախագահ

Գ. Խաչատրյան